

## ԴԻԻՆՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ԽԳ

(Պատասխան եղիազար կաթողիկոսի Հայեպէն առ Յակոբ Դ. կաթողիկոս Ի Կ. Պոլիս)(\*):

Ծառայ և սպասաւոր եղիազար կաթողիկոս և պատրիարք Երուսաղէմի ի վիճակս ամենայն հայոց, յորմէ ժամանեալ հասցէ աւանդն տէրունի, նշանն պանծալի Տեառն մերոյ և Փրկչի, համայար և սեռօրէն կաշկանդութեամբ ի տարուստ իբր ի մօտոյ բացատմէլ իբր առնթիւր յօղիւ առ իսկապէս վերապատուեալ ծերունի հաւր հայոց կըրկնամեծար ալէժաղկութեամբ որ ըստ իմաստութեամբ ներքնոյ և որ ըստ յոգնաբարդութեան չըջանին յաւէտ ճոխացեալ և ծայրագունին վերաթեւեալ Տէր Յակոբ կաթողիկոսը ի դահն հայրապետական և յաթոռն մերանախնեան, յաջորդդ լուսաւորչեան և փոխանորդդ սրբոյն Կրիստոսի, յորում յաւէտ խնդութեամբ և մշտադուարճ ցնծութեամբ խաղաղական և անդորրական ամօք, հանդերձ մանկամբք և յորդիացեալովք արբանեկօք և պաշտօնէիւք, վարդապետովք և եպիսկոպոսօք, իշխանօք և իշխեցեւօք կալ մնալ քեզ հայցեմք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս: Բայց արդ կարօտանայ իջանել աւրհնութեանց որպէս իւր ի գլխոյն մօրուս և ի դրապանս, յորմէ և նախ գեղեցկապէս յարմարեցաւ շնորհքն աւրհնութեանց և աղօթից քոց ի վերայ մեր: Այլ զնոյն անդրագարծութեամբ փոխարինել պարտիմք և ընդ հոգոյդ, վասն որոյ օ՛ն առեալ ըզնորհս և զգեղմունս աստուածալրական պարզեացն ի վերոյ գրելոցն ընձեռնութեանց յաստուածահոտն սրբութեանց և ի քրիստոսակոխ տեղեաց, ի կենարար և ի փրկագործն տնօրէնութեանց արկանեմ զանձամբ և զեղում գլխով աղնուամեծար պետութեանդ անսպառ ծաւալմամբ և յորդարժարժամար և մշտացանկ նորոգապաճոյճ պայծառութեամբ: Եւ դարձեալ առ

նոյն սիրայար և սիրագործ նորոգատարաղ շարագրութեանց բանիցն խաղաղայուզից համաձայնեալ և մեր, ոչ իբրեւ զապարասան ինչ նախ նուաճեալ արդ, և ոչ որպէս զարտուղախիզախ նախ զկծեալ արդ, այլ իբրեւ վաղիմն աւուրբ և կանուխ ժամանակօք սկզբնագոյ ձայնիւ ջանամք ի դոյն և յարիմք ի դոյն և պարծիմք ի դոյն և համարձակածայն վստահ եմք առ այդ, նախադասեալդ առ իս մարգարէականօրէն և իմաստական պատուէր, առաքելակտակ կանոն և տեառնահաստատ հրաման, առ որս թէպէտ և առ քեզ եղծաւ քոյդ բանի յեռամեանս օրի, ըստ այլ և այլ իմն կարծիքոյդ դաշն ուխտի, այլ առ իս առաւել հաւատարմատ հաստատութեամբ պահեցաւ անշիջանելի, ըստ որում և ի տիպողն յըստադիոնի բաւականապէս բացայայտութեամբ արտասանեցի: Բայց արդ ի ժամս խաղաղայուզ ճշմարտասիրութեան զիջեալ ըստ կարծիս քում խոհականութեան՝ խոստովանիմ զպարտութիւն որ սպառեալ զըտաւ իբրեանս դասուն լքելոյ, քանզի մաքրոցն է այս նիւթ պսակաց և պատժապարտիցն՝ առիթ ազատութեան ըստ ողբերգող արթնածայնին սրբոյ ի շաւիղս կրկնաշուս առձեռնելի, և արդար և վաստակախոնջ աշխատութեամբ մնացի անդօրելի: Քանզի թէ քաջարչաւ ճակատամուղ հզօր զօրաւորքդ յագեցայք ի պատերազմիս՝ ո՛րչափ ևս առաւել մեք տկարքս և արմուղքս. քանզի թէ աստուածապարզ և մեծութեամբ և յոգնաբոյլ իշխանացդ ճոխութեամբ ոչ զօրացաւ ընանիլ կոկորդ ալլասեռից, որք կարէին խնուլ զազեկասանդրեանն բացեալ պարանոց ովկիանուն և իւր կանիւն(?), ո՛րչափ ևս առաւել ընկրկեալ յետս մնամք մեք մերովս աղքատութեամբ և անճարակ մուրողութեամբս. քանզի թէ ընդ կայսրախօս համարձակեալքդ և բարձրահրաման ինքնակալեալքդ զիջեալ աստանօր զխաղաղութիւն մարդէք, ո՛րչափ ևս առաւել մեք հալածականքս և աքսորականքս, որ ոչ միայն այժմ առ տյս, այլ վաղ աւուրբք ի քաջախոյանէդ և ի վարժ յըմբշէդ, ի կիրթ ճակատամարտէդ և անպարտելի շահատակէդ անդ ի աքսորականացս կոչեալ՝ էառ զմեղայս և ընկալաւ զդարձս, և առաջի անարիւն զենմանն խոստովանութեամբ յայտնեաց զամենայն ծածուկ ներտրամադրեալն

(\*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է. «Պատասխանի եղիազարու»:

ի սրտի քո և հաստատեաց զմեզ հաւատ ուխտիւք և անջրելի պայմանիւք, զոր և ունէի անեղծ յօրէ սրբոյ առն Աստուծոյ և երկրորդ լուսաւորչի հայոց Փիլիպպոս հռ-գեորտիբի: Զայս ամենայն հանդերձ քո-յինախոհ ներտրամադրելովք կնքեաց ի վե-րայ մեր՝ ո՛չ միայն բանիւ, այլ և անեղծ մուրհակօք արձանագրեալ վստահացաւ ի մեզ և անցեալ սլացաւ ի գործս իւր: Եւ այս աստանօր զի՞ յաւելու հարկ ի վերայ զմիմեանս տեսանել, և աշխարհէ աշխարհ թեւակոխել. ո՞չ ապաքէն իսկապէս դանդա-ղանք երկանցն մահու պատեալ են զինեւ, ո՞չ ապաքէն ժամանակեանս թռնակալեալքն ի Տունս Յունաց ըստ իւրաքանչիւր տեղ-եաց եղեալք բերանաբաց. ո՞ւրանօր կարեմք զիմել, յորոց ոչ խուրցիմք և ոչ յուզա-խնդիր լինիցիմք. ո՞չ ապաքէն և ամենայն զօրութիւնք արդեանց պակասեալ և պարտ-քն յարաբարդեալ. հինքն որ ինեւ, տանն սրբոյ ընդ իւր, և միում ամի դ. ճէլալի մտանելն, առ նովաւ յետինս անգամ Մար-տիրոս վարդապետի արարեալ պարտքն անդ և ի տեղս գալով զամենայն միանգամայն զիւր առաջին և զվերջին պարտոսն լուս-ցեալ յինքենէ և արկեալ պարանոց իմ, և մեք ես աստ ի Հալապ վասն չուխայից և դումաշից և ցորենոյ զինոյ մինչև ի Ժմ-դուռուշ պարտոսն անկեալ, զիա՞րդ կարեմք շարժել, կամ թէ ի ձեռաց պարտատեարց կարեմ պրծանիլ, կամ թէ ունիմ հոգալ զծախս ճանապարհի մինչև ի յայդ վայր. թո՛ղ թէ զբռնակալելոցն ընդդէմ մեր ու-րեք ուրեք ունիմ փող մի օգնութիւն, թո՛ղ թէ զհամբաւ ճանապարհաց հատանողաց գումարտակաց, որ աշխարհ ամենայն հեծէ և հառաչէ, և ես յո՞ր գրգռութիւնս և յուռ-թութիւնս հպարտացեալ համարձակեալ թեւ-ւակոխել զնոքօք զտասն ամօք կանխօք գալ-թակղեալ և ողորմութեանց սպառեալ Ժո-ղովուրդոսն Միջագետաց կամ իմ երթալ այց առնել, գոնեա ուղղել, և ի չքաւորութիւնէ արգելիմ: Մինչև ցայժմ մարթ է թէ հարկ լիցի անպատճառ զմիմեանս տեսանել, կամ ի Տիգրանակերտն կամ ի Թէոդուպօլիսն ելեալ, զի անդ ելեալ առ քեզ՝ տեսցուք զմիմեանս. և թէ զեւ պատշաճագոյնն կա-միս՝ անդ ի սուրբ յիշմիածինն, սկիզբն մե-րոյ ծագման լուսոյ, զալ գտանել զքեզ և սուրբ սանդարամետիցն երկրպագելով՝ ի

վերայ այնմ տեղոյն տեսանել և խօսել զոր ինչ պարտն իցէ. և զամենայն ուխտ և զկամս կատարելով զարձայց ի տեղի իմ: Ա՛յս է իմ կամ և այս է իմ խորհուրդ. քան զայս աւելի ոչ ունիմ և մի՛ ես բըռ-նադատեցայց ինչ ումեքէ. քանզի և վասն վեր յիշեցեալ պատճառին զմիաբանքս իմ յուղեորեալ յառաջագոյն՝ Մնայի ես ինքնին միայն կալեալ զվարձ անասնոց և կօշիկ յոտս, յորում ժամու եհաս առ մեզ սխրալի բանք թղթոյ քո, և մեք առ ձեռն պատ-րաստ եղելովք զայս խորհեցաք և զայս գրեցաք, և առաջիկայ չուս մեր յուղեցաք Աստուծոյ և աշուհեալ որ ինչ հաճոյ է առաջի աչաց քոց, զայն արատցես (1667):

### ԽԴ

(Եղիա Եպիսկոպոս եւ միաբանս՝ Երուսաղեմէն առ Եփրազար կաթողիկոս՝ ի Հալեպ) (\*):

Պաղատանք և վեհափառ, երջանկապատիւ և հեղինակ համայն Արամեան տոհմին և Թորգոմական երամին՝ սրբազան հօրդ մերում՝ նուաստ և յետեալ ծառայից քոց, սուրբ տանս միաբան եղեալ միահաղոյն սպասաւորքս ամենեքեան, մեծ և փոքր խոնարհեալ երկիր պագանիմք առաջի Տեառնդ մերում և հօրդ սրբոյ սիրտ սրտիւ, ճշմարիտ սիրով, և որդիաբար համարձակեալ հարցանիմք զորպիսութիւն վեհիդ. և ի յոգնավիշտ և ի դառնակենցաղ ամանակիս զներքին և զարտաքին կրկնց, զոր Տէր Աստուած սուրբ տնօրինականաց շնորհիւն հանդերձ աղբնթեր եղեալ հարազատօք և արբանեկովք քովք անվթա-րելի պահեսցէ յամերամ կեանք և յով ժամանակօք՝ ի պարծանս մեր և հանուրց լուսաւորչածին հօտին: Եւ եթէ զտարանջատեալքս և որբացեալքս, ի հայրախնամ և ի բնածին սիրոյդ քումմէ զվրիպեալքս միով քաղցր ախմբ հայիլ և հարցանել զիրականութիւն և որպիսութիւն մեր՝ կամք աւասիկ ի ծառայութիւն սուրբ ուխտիս իւրաքանչիւրքս ըստ հրամանի վեհիդ ի վե-

(\*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է. «Երուսաղիմայ միաբանից զիրն է»:

լայ պատուիրեալ զործառնութեանս մե-  
րում. միայն ևեթ զհայրական սէրն և ըզ-  
գութն անվերջանալի պահելով ի վերայ ծա-  
ռայից քոյ, զոր և հայցեմք ի յապինիազ  
բարերարէն, որ զնոյնս յաւելցէ և հաստա-  
տուն պահեսցէ մինչև ի կէտ կոչման մե-  
րում, յաներկրայ մասք և ասանց ամօթու  
կատարել յանդ ծառայութեան մերում: Եւ  
յետ զոյգնագիծ տրակիս՝ ծառայ քո Եզրաս  
յատկապէս ծանուցանեմ տեառնդ իմում  
զսուրբ տանս և զքաղաքիս որպիսութիւնն  
համառօտարար: Զի թէպէտ յառաջագոյն  
ընդ եղբոր մերում Սիմէան վարդապետն  
յայտ եղև հրամանուցդ բերանով և գրով,  
այժմ ևս ձերունի հայրն մեր մահօտի  
Ստեփաննոսն հարկեալ եղև ի մէջ գալ  
առ հրամանքդ և բերան առ բերան պատ-  
մել զիրազործութիւն վանացս և քաղա-  
քիս, մանաւանդ և գատաւորիս արարմուն-  
քն, որ միշտ և հանապազ պէս պէս զուլ-  
փեր զնելով կու կեղեքէ զվանքերս, և ընդ  
մեզ առաւել հակառակ երեւ քան զայլոցն,  
մինչ զի այլ ոք ոչ մնաց ի մէջ քաղաքիս  
որք ոչ առին ի ձեռս իւրեանց մէկ մէկ  
կտոր թուղթ, խրատով պիղծ Ումար թէր-  
ճիմանին, յորն՝ թէ Պողչան հիսէ ունիմ,  
կամ թէ՛ Այս տունս այսչափ զիրաթ ունիմ.  
այլ ոչ տուն մնաց և ոչ պաղչայս ոչ սագուն-  
խանս և ոչ թաւուղխանայ մնաց, որ չե-  
լան այս դատաւորի ժամանակն հաղլամիչ  
էին արեր զմեզ. թո՛ղ եկողին խաթրն չա-  
նեմք, կու գնայ դատին և կ'իջնայ այսչափ  
մարդով՝ թէ կու գնամ քէվչ կ'անեմ, թէ  
գայ՝ իլազում որ փոքրն մեծ տի անէ՝ թէ  
Բերէք զհուճէթներդ իմպալամիչ անեմ, որ  
թօփիր չի քանդէ, և ուզած Բ Կժ (2-300)  
ղուռուչ է. մեք այլ նաչառ կու մնամք,  
գալած տաւաճուն մէկ քանի զուռուչ տալով՝  
զորուն զթուղթն կ'առնեմք, չօլէ պօլէ  
Քրտ կ'անեմք կ'երթայ, մինչ տեսնուք  
թէ վերջն ինչպէս կու լինի: Եւ Յունաց  
մեծի գնալուն պատճառն զայիպն Աստուած  
գիտէ. ապա լսեցաք՝ թէ Կեսարու եպիս-  
կոպոսն գիր է գրեր՝ թէ չուտով եղնաս գաս.  
այլ և գատաւորէն ևս խոյս ետուր, զիրա  
կենալու հալ չի մնաց ի տեղս: Մինչև ցայժմ  
փոքր ինչ ի նոցանէ կու մխիթարէաք, նա  
ևս ոչ կարաց համբերել, եթող գնաց: Ելաւ  
դատին ի Ծնունդն գնաց պատիւ, մարդ ու-  
ղարկեց՝ թէ Ինձ ձ.ական զուռուչ թող տան

ամէն վանից. վայր ի վեր տըւաք զրամ,  
ամէն վանից չուխս մի և երկու զուռուչ  
ուղարկեցաք. անցաւ քանի մի օր, ելաւ  
թուրլի թուրլի դռներ երաց, մինչև ի գե-  
րեզմանատունն ելաւ՝ թէ Քէֆչ կ'անեմ,  
զուք զմէջճիւն գերեզման էք արեր: Տե-  
սաք որ խալսելու հնար չկայ, տուաք զձ.  
տկան զուռուչն, հազիւ ազատեցաք ի ձե-  
ռաց: Ոչինչ քանի մի տակիմ հալով չի յա-  
գիր, որպէս զՔօռ Կիրակոսն ճիզվի քան  
մահանայ երաց՝ թէ կու ևս արեր, մարդ  
ևս հայհոյեր, բոնեցին Բժ զուռուչէն յաւելի  
առին. նէչէ նէչէ այնպիսիք, զոր Աստուած  
խափանէ զիւրեանց չար խորհուրդն: Կ'ա-  
սեաք՝ թէ մուսէլլում փոխով, Հուսէյին  
ազան գայ, մէկ հէկ հէրէքէթ մի պէլքի  
կ'անէ, կու հայիմ որ նա ևս ափ ի բերան  
եղեալ չի խօսիր օրմիէճէկ զսէյէ(?): Սորա  
մէկ հալ մի չի լինի՝ քաշելու տէրտ չէ,  
հրամանքդ լաւ գիտես. անճախ մեք զմեր  
ցան զեկուցաք հրամանուցդ: Եւ յունաց  
հետ եղած հրապներս այս է. ընդ ամե-  
նայն յառաջ և յետ ԲԻ (2000) զուչ. է հա-  
սուցիր մեզ. զչուխայի գինն չհապեց.  
Վարդանին թէմէսուկ ետուր՝ թէ չուխի  
գինն չտուի. և մեք տըւաք ԲԻ զուռուչին  
թէմէսուկ և ընէհին Ուլ կտոր խաչ և սկիւհ.  
Ի մէջ սէփէտին կնքեալ տըւաք ըստ տեառնդ  
հրամանի, և եժ զուչ. Եաղուպին ճէրիմէն  
է, նորանով Բժ զուչ. է և Ժ.ն զէխիքէ  
ըստ չափու և ըստ կարի լցաք աղօթիւք  
սուրբ հօրդ: Եւ վասն զուռուչի խիստ սխլէթ  
ունիմք, թէպէտ յառաջագոյն ծանուցաք  
հրամանուցդ և այժմ ևս երկրորդեմ. վասն  
Աստուծոյ էհմալ չանես, փութով հասու-  
ցանես, զի յոյժ նըւաստութիւն ունիմք,  
գերա տեղս մէկն երկուք է գինն, տօն-  
լուխն ութն զուչ. հազիւ կու տան. այլ և  
կանթեղի թել քանի մը տէստէ ողարկէք,  
թէ գործած և թէ անգործ, զէրա խիստ  
չկայ:

Դրեցաւ սեպտեմբերի քսան հինգ և վե-  
ցին (1667):

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

